

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "


Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ՎԱՆԻՍԻԿ

ՊԵՏԱԿ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Դ. ՏԱՐԻ

ՓԵՏՐ. 17 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 200

ԹՈՂՈՒՑԵՔ ՈՐ ԽՆԴԱՅ

Վարդանանցի հանդէսը Թուրքիոյ Հայերուն համար այնքան կարօտագին փնտռուած ու հրաշակաւոր Վիշապին՝ զրկումի է՝ն առաջին իրատէին հանդպած գերազանցապէս ազգային հանդէս մը ըլլալուն համար մանաւանդ, չէ՞ր արժեք արդեօք արտասահմանի հայերուն սիրոյ և համերաշխութեան ցնծալից տօներէն մէկը ընել ու ամեն կերպով փափկանկատ վարուիլ, որքան հաճելի, այնքան և սփոփարար հանդէսի մը բոլոր վերաբերումներուն ու բոլոր մանրամասնութեանցը մէջ:

Հանդէսին դերակատարները՝ միշտ վարժապետները եղած են և ատոնց նուիրուած են յաճախ միամիտ ամբողջին կողմանէ — հանդէսին սահմաններէն դուրս — լաւ կամ վատ վարժապետի տիրազօնն ալ, որ եղած է իրենց հաշտոյն քաքիէ տ'իսանքիքէ մը, կրթական նոր տարեշրջաններու շաւիշտին մէջ դեր ունենալու համար, կամ ոչ: Տեսակ մը Բիւրախիֆօ, ուրկէ՞ չատեր, ամիսն որ, չը կրնալ անցնելու չափ ծիծաղելի եղած են անճարակօրէն:

Այո՛, ատոնցմէ շատեր ճանչցած չեն դժբաղդաբար պէտք եղած կերպով իրենց դերին փափկութիւնը ու յաճախ ինկած են անանկ քառասոյնի վիճակի մէջ, ուր ի հարկէ խնդուքէ աւելի զգուանք և արգահատանքէ աւելի Թուք կրնային հրաւիրել իրենց վրայ:

Վարդանի տօնիւնը ողբալ ու միևնոյն ատեն ժողովուրդի տաք զգացումներուն վրայ պաղ ջուր սրսկել, հանդէսին ազգային հանգամանք տալ ու միևնոյն ատեն ելլել եսի աղտոտ հաշիւներ մաքրել, հանդէսին նուիրականութեանը անունով

անհամերաշխ տարրերու միութեան կոչ ընել ու միևնոյն ատեն աքլորային մարտի մը բոլոր ծիծաղելիութեամբը ասո սրբազան կոչը հակասել զաւելչութեն, ահա ասոնք եղած են գլխաւորաբար՝ վերջին տարիներս, Ֆիլիպէէն յետոյ Սիլիսդրէի Վարդանանց հանդէսները պատկերող սև ու տխուր գծերը:

Ֆիլիպէ՛ որուն քանի մը տարիէ ի վեր այդ սրբազան տօնին մէջ բռնած ընթացքին շարժառիթը կուսակցական յաւէտ դատապարտելի պայքարներու մէջ փնտռելու է, դեռ խաղաղացումի ու է յայտարար նշան չը տար, քանի որ այս անգամ ալ կուսակցական շնորհունակ վարդապետ մը ջուրը պղտորելու տենչով այդ նուիրական օրը իր ճգնաժամայրէն կը նետուի հօն ու ժողովրդական սուր ու զօրաւոր բողոքին առջև սահմուկած, հազիւ ուրեմն տ'էկրենելի թեւածութեանը ապաստանելով, կամովին հրաժեշտ կուտայ՝ Վարդանի յիշատակը ներբողելու պատրուակին տակ, իր ցափառելու յիմար մարմաջին:

Իսկ Սիլիսդրէ՛ ի.ն. Ժ.ի փոխուած վարդապետ մը — ախ սա վարդապետները, սա վարժապետները — իր գէ՛մ ունենալով նախկին պաշտօնակից մը, յախուռն քննադատութեան մը իրարանցումին մէջ, կը վրիպեցնեն հանդէսին նպատակը, ու նախորդ տարիներու ոչնուազ գայթակղական դէպքերու վերակրկնումովը՝ այդ քաղաքի վարդանանցին կուսակցականութեան անունը կը յաւերժացնեն ցաւագինօրէն: Մենք կը զգուշանա՞նք մանրամասնութեան մտնելէ, որչափ ալ խմբագրութեան հասած նամակներ ատոր պարգաները կը պատմեն ճշգօրէն:

Մենք չենք ըսել, ոչ Ֆիլիպէի շնորհունակ վարդապետին թէ՛ լաւ էր իրեն յանկարծ ոտքերը կտորել ու դուրս չ'եկել իր ճգնաժամայրէն. ոչ ժողովուրդին թէ՛ օրուան սրբութիւնը պէտք

էր պատկառանք ազդելով իրեն, թողուլ որ վե-
ղարը քանի մը վայրկեան եւո ծածանէր կու-
սակցութեան մը դրօշակին քով, ոչ տէկրինեի-
ին, թէ պէտք չէր իր թեւերը երկարելով, փիլի-
պէի պառակտիչ ոգին ըլլալը ապացուցանել
գործնապէս: Մենք չենք ըսեր Սիլիսդրէի վար-
ժապետին թէ պէտք էր աւելի խնամք տանիլ
իր խօսքերուն ու գաղափարներուն բացատրու-
թեանը և ոչ ալ անոր ընդդիմաբանին, որ նը-
ւազ յուզումով խօսէր: Ատոնց բարեկրթութիւնը
մեզ չը շահագրգռէր երբէք: Մենք մէկ բան
միայն կըսենք ու կերդուրնցնենք զիրենք, ի-
րենց էն սիրած բանին վրայ:

Աստուծոյ սիրուն թողուցե՛ք, որ ժողովուրդը
գոնէ օր մը խնդայ իր այս անկերջ ճառապան-
փին մէջ:

ԹՕՏԻՈՒՆ

ԱՅԿԱՅԻՔ

ԱՄԵՐԻԿԱԶԱՅԻ ԵՒ ԵԴՈՒԱՐԴ Է.

Վիկթորիա թագուհւոյն մահուանն առթիւ
Ամերիկահայոց Ազգ. Մեայուն Յանձնախումբը
ցաւակցական հեռագիր մը շրկած ըլլալով Անգ-
լիոյ թագաւորին, այս անգամ յիշեալ Մասնա-
խումբը հետեւեալ պատասխանը ստացած է, զոր
կ'արտատպենք Ամերիկայի «Կոչնակ»-էն:

(Մ. Ս. Գաբրիէլեան Էսք. Ատենապետ Ամե.
րիկայի Հայ. Յանձնաժողովին.)

Պըքինկհամ ֆէլէյս.

Հրամայուած է Ա ն ձ ն ա կ ա ն Քարտուղա-
րին հաղորդել Թագաւորին շնորհակալութիւննե-
րը՝ ձեր նորին Վեհափառութեան շրկած պատ-
գամագրոյն մէջ պարունակուող հաւատարմու-
թեան և համակրութեան ազնիւ արտայայտմանց
համար:

26 Յունիւ. 1901

— Յանուն Որբոց և Կարօտելոց ցարգ հա-
ւաքուած գումարին հարիւրին 60ը Ռուսահայե-
րէն, հարիւրին 24ը արտասահման ընակող բա-
րեսէր անձերէ և հարիւրին 16ը Պոլսոյ և Թուր-
քիոյ մէջ բնակող հայերէն հաւաքուած են:

— Անցեալ կիրակէ մեծ ոգեւորութեամբ
տեղի ունեցաւ Վառնայի Ազգ. վարժարանաց
Հոգաբարձուական ընտրութիւնը և ընտրուեցան
հետեւեալները:

Տեարք

Յարութիւն Հաճօլեան

Միհրան Զգոնեան

Յարութիւն Էնկիպարեան

Գրիգոր Թոսպըլըգեան

Փիլիպոս Հալաճեան

Պայքարը՝ որ կը տիրէր երկու բաժնուած
ուժերու միջև ընտրութեան առթիւ, շատ նշա-
նակիչ հանգամանք մը ստացաւ մանաւանդ երբ
քուէհամարը՝ ժողովուրդին յաղթանակը ապա-
հովեց ընդդէմ աղայական քմահաճոյից, և այս
կերպով ժողովուրդը գործնական ապտակ մը
տուաւ անոնց, որ յանուն իրենց կը խաղային
իր զգացումներուն հետ և անտես կը թողէին իր
իրական շահերը:

Մենք ի սրտէ կը շնորհաւորենք ժողովրդա-
կան նորընտիր հոգաբարձութիւնը և կար ու յա-
ջողութիւն կը մաղթենք իրենց դերաշնչապէս
փրկարար գործին համար:

— Թիֆլիզէ կը գրեն թէ Շամախի առաջ-
նորդ հանգուցեալ Եսայի Արքեպիսկոպոս իր ու-
նեցած բոլոր հարստութիւնը Ազգին նուիրած է,
որով այսօր ներսիսեան դպրոցի կտակած գումա-
րը 10,000 ռուբլի կը հասնի, բացի Գէորգեան
ձեմարանին նուիրած 2000 ռուբլիէն: Սոյն գու-
մարներուն տոկոսներովը չքաւոր և որը մանկը-
տիք պիտի դաստիարակուին:

— Վառնայի Որբախնամի տիկնանց ճիւղի
Գործ. ժողովը իր շնորհակալութիւնը կը յայտնէ
Աղնուուհի Տիկնոյ մը որ ուրախութեան մը առ-
թիւ (10) տասը Քր. նուիրած է ընկերութեան:

Փափաքելի է որ ուրիշ Աղնուուհի տիկնանք
ալ հետեւին սոյն բարի օրինակին:

— Ամերիկայէն մեզ կը գրեն. «Հոս հրա-
տարակուող «Հայրենիք»-ի խմբագիր Պ. Ա. Վառա-
եան, որ իր թերթին մէջ Վեհափառ Հայրիկին
հասցէին անարգալից խօսքեր ուղղելուն համար
երեք հայերէ յարձալում կրած էր, անոնց դէմ
դատ բացած էր Ուսթրի պատժական դատարա-
նին առջև: Դատարանը երկուստեք վկաները լը-
սելէ ետքը անպարտ արձակեց նոյն երեք ամ-
բաստանեալները, միեւնոյն ատեն սա խօսքերը
ուղղելով Պ. Ա. Վառաեանին, «Գնա՛ և ասկէց
վերջը ժողովուրդին զգացումներուն հակառակ
յօդուածներ մի՛ գրեր»:

(Դատին մանրամասնութիւնքը յաջորդով):

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առ Պ. Ղազարոս Նահապետեան

Վառնա 17 փետր. 1901

Ձեր յարուցած խնդրոյն առթիւ մեր ուզած բացատրութիւնը չի տեսանք «Իրաւունք»ի վերջին թիւերուն մէջ ալ:

Կը լսենք թէ դուք ասդին անդին 31 անձանց գէմ՝ «Չը հասկցողներուն պատասխան չ'ունիմ» կըսէք ու միւս կողմէ ալ այդ անձանց մէկ բանին կը յայտարարէք թէ «Ամիսէ մը պիտի պատասխանեմ իմ տեսութիւններուս շարքին մէջ»:

Արդ, բա՛նի որ այդ պայմանաժամին պիտի կառչէիք, ինչո՞ւ երկու ամիս առաջէն խնդիրը հրապարակեցիք և այժմ ալ կը ծածկէք Ձեր ըսելիքները: Ա՛ռաջարկենք Ձեզ որ ամիս մը վերջը ընելիք տեսութիւններնուդ այդ ազգօգոտս մասը անպատճառ հիմակուց հրապարակէք, ապա թէ ոչ պիտի պարտաւորուինք ցաւ ի սիրտ ըսել թէ դուք Ձեր գրածը բացատրելու հեղինակութիւնը չունիք, ուստի լու կ'ընէք որ ազգը պարապ յոյսերով օրորելէ զգուշանաք:

31 Ստորագրութիւնք

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Փ. Պոլիս

Անցեալ հինգշաբթի 8 փետր. վարդանայ ու իր բաջ զօրավարներուն փրկարար նահատակութեան առթիւ տեղւոյս եկեղեցւոյն մէջ Պոլլի. Այցելու հովիւ Գեր. Բարթոլոմէոս Ծ. Վրդպ. աւուր պատշաճի բարով մը խօսեցաւ ու վերջացուց զայն ցաւ յայտնելով թէ ամեն Հայ սրտի նուիրական այգպիսի օր մը քիչեր կը գտնուէին եկեղեցին. վերջապէս, եկեղեցւոյ աւարտումէն անմիջապէս յետոյ ամեն տարուան սովորութեան համեմատ դպրոցական աշակերտաց և աշակերտուհեաց կողմանէ հանգէս մը եղաւ նոյն տօնական աւուր յիշատակին բաւական ցանցառ բազմութեան մը առջև. Արիւթօկրթիք դասակարգը իր բացակայութիւնովը կը փայլէր՝ բանի մը տարուան գովելի սովորութեան մը հակառակ բանալով իրենց վաճառատունները, բացի մէկէն որո՞ւ ամեն ընթացքին մէջ կը տիրէ ազնիւ նկարագրի գիտակցութիւնը. հանդիսականք ժամու մը չափ ունկընդիր ըլլալէ վերջ կարգ մը հայրենասիրական երգերու ու ծառախօսութեանց, բեմ ելաւ վարժարանի տնօրէնը և վարդանայ մասին բաւական խօսեցաւ, քիչ մը վեր-

ջը հանգէսը վերջացաւ Այցելու հովիւն պահպանիչովը. հանգիսականք երբ կը պատրաստուէին մեկնելու, յանկարծ բեմ նետուեցաւ Թ. Բազարճըգի շնորհունակ վարդապետը որուն Թաթար Բազարճըգէն «Ճանապարհ մարին» երգուած ըլլալուն շարաթէ մը ի վեր բաղաբաժնի կը գտնուէ, ձեռքի շարժումներով մեկնելու պատրաստուող ժողովրդին հասկցնել կուզէր թէ չը ցրուին խօսելիք ունի իրենց, երբ անդիէն չուչացաւ ձայն մը որ ըսաւ շնորհունակին ականջին «վարդապետ, լո՛ւսցիս զի խաղաղեցին»։ Նորին գերաշնորհակութիւնը գլխիկոր վար իջաւ բեմէն, զգալով միանգամայն թէ իրեններուն 3-4 տարիներ առաջ խոյնշափ կիւճայն ունեցող լոռնան այս տարիներուն մէջ մարած էր գրեթէ:

Իսկ իւրայինք գոչեցին «Աւա՛յ փառացս անցաւ» որինք:

* *

Այս տարի, տեղացի հայ ընտանիքներէն բանի մը տիկիններ ուրախ և երջանիկ անցունելու համար բարեկենդանի շարաթը, «բարեկենդանի շարաթ» անուն ընկերութիւն մը ունեցան, այդ նորահաստատ ընկերութեան նպատակն է տապկուած պիպիներու ու անուշեղեններու շուրջը ուրախ ու զուարթ բարեկենդան մը անցունել:

Այս ընկերութեան ներքին կանոնագիրն ալ կարգալէ վերջը իմ գիտողութիւնները պիտի ընեմ, ցոյց տալով կարգ մը իրաւացի պատճառներ որոնք ստիպեցին զիս այսչափ աննշան երեւոյթ մը լրագրի նիւթ ընել:

ԿՈՉՆԱԿ

* Գութանի Վառնայի գործակալ Տ. Միքայել Հալաճեան կը գտնուի ամեն օր ժամը 12-1 0-թէլ Տօպրիչ և իրիկունները ժամը 8-11 Սասուն սրճարանը:

ՃԵՌԱԳԻՐ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Քամչաթքա

Վարժարանին մէջ դառնուած աթոռներն ու սնտուկները երկուշաբթի օրը մեծ հանդիսաւորութեամբ հանգստեան կոչուեցան. . . վառելափայտի տեղ սօպան նետուելով:

Բոժ. — Կարգը գրաւեղաններուն է:

ԶԱՆԱԶԱՆՔ

ԿՈՅՐԵՐԸ ԿԸ ՏԵՈՒՆԵՆ, ԽՈՒԼԵՐԸ ԿԸ ԼՍԵՆ...

Այս միջոցիս Բարիզի Հոգեբանական Ենս-
քիքիւքը ամէնուն հետաքրքրութեան առարկայ
է դարձեր, վասն զի այնտեղ կոյրերուն տեսնել
կուտան և խուլերուն լսել: Արդէն երեք հարիւր
փորձեր եղեր են խուլերու և կոյրերու վրայ, ո-
րոց ամէնքը ի մեծ զարմանաւ ամենուն լսած եւ
տեսած են: Դարձեալ ելեկտրականութիւնն է
որ այդ հրաշալիքները կը գործէ: Այս անգամ
սինսոնասօկրաՓն է որ գիւրութիւններ կուտայ,
կոյրերը այդ գործիքին մի մասին վրայ ձեռ-
քերնին պտտցնելով, պարզապէս կը տեսնեն ե-
ղեր, իսկ ելեքտրական թելերով — զորս գործի-
քին վրայ կաւելցնեն — խուլներն ալ կը լսեն խիստ
պարզ և յստակ: Երանի թէ կատարելագործուէր
այս նոր գիւտը, ինչ ծառայութիւններ պիտի
մատուցանէր հեծող մարդկութեան:

Բարիզ

Դ. Ս.

ԷԼԷՆԱ ԹԱԳՈՒՀԻՆ

Իտալիոյ Էլէնա Թագուհին իր գեղանի կես-
րոջ՝ այրիացեալ Մարգարիտային նման վրան շատ
խօսիլ կուտայ իր գողտրիկ և մայրական հոգա-
ծութեան հետեանօք հանդէպ իր հպատակներուն:
Անցեալ օր տղեկ մը, որ հազիւ սկսած էր քալե-
լու ելնել, իր ստնտունին ձեռքէն խոյս տալով փո-
զոցին մէջ կը վազվռտեր, երբ խոշոր շուն մը ըս-
կաւ անոր հետ խաչալ թաթելով զայն: Ճիշտ այդ
միջոցին Էլէնա Թագուհին փողոցէն կ'անցնէր ե-
կեղեցի երթալու համար: Վաղեց և անմիջապէս
տղեկն ազատեց շան թաթերէն և գիրկն առաւ,
ու երբ ստնտունն սարսափահար կը վազէր, Թա-
գուհին քաղցրութեամբ անոր նայելով, ըսաւ. —
«Սիրելիս, տղան նայելուն կերպն այս չէ:» —
«Ո՛հ, Վեհափառ Տիրուհի, ըսաւ ստնտուն գողգալով,
շատ կը ցաւիմ: Բայց Վեհափառ Տիրուհի, ըզ-
գեստներնուդ նայեցէք: Թոյլ տուէք մաքրեմ,
Վեհափառ Տիրուհի:» Եւ ստնտուն ծունկի գա-
լով սկսաւ մաքրել Թագուհիին զգեստները, որք
տղուն ոտքերէն բոլորովին փոշտած էին: Ման-
կիկը Թագուհիին գիրկն էր միշտ, և Ն. Վեհա-
փառութեան ժամացոյցի շղթայէն հրապուրուած
չէր ուզեր վար իջնել գիրկէն, և Թագուհին ըս-
տիպուեցաւ յաղթանակաւ տանիլ զայն մինչեւ

եկեղեցիին դասը խորանին առջեւ, ուր կ'աւա-
ցուկ մը վար դրաւ: Այս բարի ընթացքով Թա-
գուհին երկու սիրավառ սիրտեր շահեցաւ, ստոյն-
տուն և տղուն մայրը:

ՍԻՐԱՎԷՊ ԷՏՈՒԱՐՏ Է. Ի.

(Անգլիացի կենսագիրներէն Բադուամ)

Կալէսի իշխանը քսան և մէկ տարեկան էր,
և իր ամուսնութեան խնդիրն ստիպողական կ'ըլ-
լար: Դերման իշխանուհիի մը վրայ կը մտածէ-
ին, բայց առաջարկուածն աղուոր չէր, և իշխանը
պաղ էր այս միջոցին մասին, առանց սակայն
վերջնական մեղքում մը ցոյց տալու: Դիպուածաւ
օր մը տեսաւ ճերմակ հագած մատղաշ աղջկան մը
լուսանկարը: — Ո՛վ է այս պաշտելի աղջիկը,
հարցուց իշխանը: — Դանիոյ Թագաւորին աղջիկը,
պատասխանուեցաւ: Կալէսի իշխանն սկսաւ խոր
հիշ: Անկէց քանի մը օր վերջ, Ալպէրդ — Էտուարտ
իշխանուհիին հիանալի մէկ մանրանկարը տեսաւ
Գորէնհակէ դարձող գրքուհիի մը տան մէջ: Ան-
միջապէս իմացուց թէ դերման իշխանուհիին
հետ մտածուած խնամութիւնը գործին չէր գար
և գաղտնապէս Դանիոյ արքունիքը զրկեց վստա-
հելի պատուիրակ մը, որ քիչ ատենէն հաւաս-
տեց իրեն թէ լուսանկարը բոլորովին յար եւ
նման է օրինակին և թէ Ալէքսանտրա սքանչե-
լապէս գեղեցիկ է: Այն ատեն իմացուց իր մօր-
Վիքտորիա Թագուհիին թէ վերջին ծայր սիրա-
հարած էր իշխանուհիի մը զոր գեռ տեսած չէր:
Թագուհին խնդաց, և խորհուրդ տուաւ անոր
զբօսական պտոյտ մը ընել Եւրոպայի ցամաքին
վրայ, Դերմանիոյ կողմերը, ուր նոյն միջոցին
կը ճամբորդէին Դանիոյ իշխանուհին և իր ըն-
տանիք: Վօրմսի մայր — եկեղեցիին մէջ էր որ ա-
ռաջին անգամ զիրար տեսան գեռատի երիտա-
սարդն և մանկահասակ օրիորդը: Կայտառ երի-
տասարդը մայր — եկեղեցիին գեղեցիկ շրանկար-
ները կը դիտէր երբ իրեն առջեւ երեւցաւ իր
երազին իրականացումը: Երկուստեք կայծակնա-
հար եղան: Դեռատի իշխանուհին Ալէքսանտրա
աշնան Ուինտտորի գղեական այցելեց և հոն բնա-
կեցաւ քիչ մը ժամանակ: Որքան գեղեցիկ նոյն-
քան բարի ըլլալով, շատ շուտով շահեցաւ իր
ապագայ կեսրոջ համակրութիւնը: Վիքտորիա
աղւորիկ և քնքուշ մականուն մը տուաւ իր զաւկին
նշանածին. — «Պարիկ» (կամ գիցանոյշ) որ շատ
լաւ կը յարմարէր տան և ութ տարեկան լուսա-
փայլ հարսնացուին: Բոլոր սիրտերն առ ինքն դը-
րուեց, և խանդավառութիւնն աննկարագրելի
էր, երբ «Դանիոյ Վարդը» և «Ծովու Թագաւոր»

ներու Աղջիկը, Լոնտոն հասաւ : Բայց Ալեքսան-
տրա չլացաւ իր նոր դիրքին շքեղութենէն : Իր
հայրենիքէն մեկնելէն առաջ, օժիտ չինեց եօթն
աղքատ Դանիուհիներու, որք իրեն հետ նոյն օրը
պիտի կարգուէին : Վիքորիա Թագուհիին զօ-
սանաւն Անգլիա բերաւ իշխանուհին և իր ըն-
տանիքը : Ի Կլէյվսէնտ, անհամբեր և եռանդնա-
լից նշանածը զբօսանաւը գիմաւորելու գնաց, և
նաւակամուրջին վրայ ցատկելով, առանց ներ-
կայ բազմութենէն քաշուելու, բռնեց իր խօսեց-
եալին երկու թիւերէն և իրեն քաշելով զայն,
երկու երեսներն համբուրեց : 1864 Մարտ 10ին
ամուսնութիւնը տեղի ունեցաւ Ուինտորի Սէնդ-
ձորճ մատրան մէջ : Մեղրալուսինն անցուցին
Օսպորնի մէջ : Դեռատի հարսը, արքունեաց մէջ
մտնելուն պէս, բոլոր քուէները շահեցաւ իր
գեղեցկութեան, փափկանկատութեան և հրա-
պոյրին շնորհիւ :

Ծ Ի Ծ Ա Ղ

Ճաշարանի մէջ,

— Կարսօն, պաղ բան մը ունի՞ք :

— Այո՛ պարոն, ոտքերս ու քիթիս ծայրը :

Մեծախօսիկ խմբագիր մը «ընտանիք» մէջ
նստած կը պարծենար ըսելով թէ իր թերթը հա-
ցի պէս կը ծախուի ժողովուրդին մէջ :

— Քիւրճով չէ նէ Թաւառ օխալով հարցուց
անդիէն զուարճաբան մը :

Թուաբանութեան դասատուն կոտորակներուն
վրայ լաւ բացատրութիւն մը տալու համար կը
հարցնէ :

— Պարոն Յովհաննէս, երբ դեղձ մը առնեմ
չորս մասի բաժնեմ ու ամեն մէկերնուդ մէյմէկ
կտոր տամ, ի՞նչ կը մնայ ինծի :

— Կուտե՞րը, միւսիւ :

Երկու կոյր մուրացիկներ փողոցի մը անկիւնը
նստած էին, անոնցմէ մին պաղատագին ըսաւ
անցորդին. — Ազնիւ պարոն, տասը փարա տուր ին-
ծի : Ու երբ պարոնը ձեռքը գրպանը կը տանէր
դրամը հանելու, երկրորդ կոյրը ձեռքը երկնցնե-
լով գոչեց, — Ազնիւ պարոն, դրամը ինծի տուր,

ես անկէ աւելի կոյր եմ, ու ինծի հինգ փարան
ալ կը բաւէ :

Զօքանչը փեսին.

— Եթէ փոխանակ աղջկանո ամուսինը եղած
ըլլալու, իմս ըլլալու դժբաղդութիւնը ունեցած
ըլլայիր, չպիտի վարանէի քեզ թոյնով լեցուն
թէյ մը տալ :

— Ես ալ փոխանակ փեսացի ըլլալու քու ամ-
ուսինդ եղած ըլլալու դժբաղդութիւնը ունեցած
ըլլայի, չէի վարաներ այդ թունուոր թէյը խմե-
լու :

Մտիկ ըրէ բարեկամ, քեզի բան մը պիտի
վստահիմ, բայց մարդու պիտի չըսես,

— Մարդու չեմ ըսեր, եթէ այդ վստահելիքդ
միայն դրամ ըլլայ :

ԱՍՏՂ

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ՊԱԼՕ

Մատմաղէկ Կիւլգատ՝ բէնճէմպիհ կէճէսի վէ-
րիլէճէք պալօտան մահրում գալմամագ իշիւն էօ-
թէ պէրի տիւշիւպ, կիւճ հալ էլէ պիր պիլէթի
գաւալիէն եագալամը վէ անընյա պալօյա կիթ-
միշ իսի. հէր նէ գատար քէնտի Արթինիլէ կիթ-
մէք արդու իտէր իտի էսէ տէ, չիֆայտէ, զէվալ-
լը շօճուղուն ճէպլէրի օ կիւնլէրտէ հաշլագլըգ
իլլէթիտէն միւլտարըպ օլտուղունտան, մատմա-
ղէկ էլէ կէշիւրմիշ օլտուղու պիլէթի գաւալիէն
գանաաթ էլլէտի :

Պալօ սալօնունտան իշէրի կիրտիքտէ՝ պիր
թագըմ եարամագ մասքէլիլէր պունլարըն էթ-
րաֆընը ալըպ, պիր իքիտի գաւալիէն լագըր-
տըյա թուլթուպ, պիր իքիտի տախի չիմտիքլէր
իլէ մատմաղէկ սէլամլամայա պաշլատըլար : Մէր-
գումէ՝ ճան աճըսընտան պաղըրըպտա գաւալիէ-
նիւնին բաթըռտը չըդարմասընա սէպէպէյէթ
վէրմէմէք իշիւն չիմտիք աճըսընա թէհամմիւլ
իթմէյէ մէճպուր օլտու. պէրէքնաթ վէրսին պու
հալ չօգ սիւրմէտի, հօրա հալապը չալընտըղըն-
ասն էթրաֆընը գուշատանլար հօրայա իշիթի-

րագ իթմէք իչին պրագըպ կիթտիւէր: Մատմա-
ղէլ Կիւղատ տախի գաւալիւնի իլէ պէրապէր հո-
րայա պաշատը:

Հորայա իչթիրաք իտէն գաւալիւնին պիրի՝
օմուզ օմուզա օյնամագ իչին, էլինի՝ եանընտա
պուլունան պիր եապանճը տամանըն օմուզունա
աթտը. . . թէրպիյիճէ. մէրգումէ՝ անըն էլինի
պրագարագ, տիկէր պիրինին եանընա կիթտի:

Իչպու մէնզարէյի կէօրէն Կիւղատ՝ գաւա-
լիւնինէ տէտի:

— Կէօրտիւն մի պիզիմ թագուշու:

— Ամա գըզ տա էյի եաբտը:

— Հիչ պէօյլէ եէրտէ էօյլէ շէյ օլո՛ւրմու պէ
ճանըմ:

— Պէն օլտամ, սուրաթընա պիր սիլլէ եէ-
թիշտիրի իտիմ:

— Ա՛, օլմաղ. մասգալը օլան գաթլանաճագ:

Հօրա խիթամ պուլուպ հէր քէս կէզինմէյէ
պաշատը: Սիյահ մասքէլի պիր տամա իլէ սիվիլ
պիր գաւալիւն պէյնինտէ շու եօլտա պիր միւ-
քեալէմէ ճէրէյան իթմէքաէ իտի:

— Այս գիշեր լաւ ժամանակ պիտի. . .

— Պրանսերէն խօսէ:

— Ույի մատմաղէլ, ժը վուտրէ վնիր շէ վու,
մէ՛ ան չէ ամա ասոնք որո՞նք են:

— Ինչո՞ւ պէտք պէ՛ ճանըմ, ասանկ տեղ մը
եթէ ֆրանսերէն գիտնալնիս չը ցուցնենք նէ՛ ո՛ւր
պիտի ցուցնենք:

— Այո՛, ճշմարիտ է. ուրեմն վուլէ՛ վու ֆէր
իւն սիւրիւրիզ ա սէ մասքէ:

— Ֆըզօն, ֆըզօն, աղէկ կըլլայ, սէ բուռ մուս
բլիւ ակոէապը:

Կիւղատ քէնտի գաւալիւնինէ:

— Պիրէ պուլար նիչին՝ էրմէնիճէ գօնուշմա-
յօրլար:

— Զիւպպէ կէօրտիւյիւն եօգ մու մօրու:

— Աման պիրագ էօթէտէ կիտիպ տուրալըմ.
շու մասկասըզ ուզուն պօյլու ինսան սանըրսըն քի
իւզէրիմիզէ տիւշէճէք տիր. հիչ օթուրմագ պիւ-
մէյօր. օնէ՛ զասար տա գըրըլըպ եիւրիւմէք:

— Պիր շէյ տէ օ տըր իշթէ. բարեկենդան տըր
կալիպա եա, հէր պիչիմի սէ պուլունաճագ:

Քէօշէնին պիրինտէ տէ:

— Տուտու պէ, կէօրտիւն մի թագուշու:

— Նէ՛ օլտու քի մօրու:

— Հանի պիր սիյահ մասքէլի եօգ մու, օնա

գալմատը օյնամայա տա եիւղիւնիւ էօթէյէ չէվի-
րիպ օթուրտու:

— Օհ օլտուն. ուուրսուզլար քիմ պիլիր գըզա
նէ՛ եաբտըլար տա. . . հէլպէթտէ բէք կիւղէլ
եաբմըլ:

— Աման տուտու, շու ուզուն շօճուա պագ:

— Պու կազկըջագ քիմի՞ն նէսի եա մօրու:

— Հիչ օյնամագ պիւլմէյօր, սանըրսըն քի
իւթիւնէ երգըլաճագ:

— Պիւլմէյօրսա նէյէ՛ օյնաեօր:

— Պալօ տէյիլ մի, պիլէն տէ օյնար, պիւ-
մէյէն տէ:

— Շու պաշընա եալտըլը թաճ գօյմուշ տա
բաղվանթ կիպի հիչ տուրմայըպ էթրաֆը տօլա-
շան քիմ տիր պիրէ:

— Օ քաջն Վահան տըր:

— Հա՛նկը գաշըզ վահան, պիզիմ գունտու-
րաճը՝ վահանմը:

— Գաշըզ տէյիլ մօրու. էսկի հայ կէնարալ-
լարընտան պիրի տիր. արգասընտան կէլէն տէ՛
Մուշկան Նիւսալաուրտ տըր:

— Ուշան ճինա բալամօնտ մը. . . նէ՛ պիչիմ
իսիմէրտիր պուլար մօրու. եա օ էլինտէքի քի-
թապ նէ՛ տիր:

— Թէ պէ օյուն քիթապը. օնուն իչինէ պա-
գըպտա օյնաեօրլար:

— Ապու Ալլահ ճէզալարընը վէրսին. օնուն-
տա մը քիթապընը չըգարմըլար. Տէտիմ ա մօ-
րու պիզիմ վագըթտա պիւթիւն պիւթիւնէ հայ-
վան եաշաեօրմուշուգ:

Պու արա մատմաղէլ Կիւղատ եիւղիւնիւ աչ-
մըլ օլարագ՝ անլէրէ կազաշտը:

(Տէվալի)

ՄԱՍԻ

Ի Լ Ա Ն

ԱՅԻՆԷԻ ԼԷԻՎԵՅԻՅ նամ քիթապ՝ Մարտ 1 տէն
իթիպարէն բէյտէրէյ նէշր օլունաճագտըր: Կա-
ղէթա վէ քիթապ քեալտը ֆիյաթընըն 100 տէ
20 զամմը մինասիպէթիյէ՝ պիւլմէճպուրի՝ կէրէք
Վառնա վէ կէրէք Պուլկարիանըն սաիր շէհիր-
լէրի իչին պէհէր ճիւտին ապօնէ՝ պէտէլի 10 շըշ-
տըր, (բօսթա իւճրիթի պիզէ ալիտ օլարագ):

Վարնատա էլտէն տախի սաթըլաճագ տըր
պէհէր ճիւզի 10 սանթիմէ:

Եէտիմիզտէ պուլունաճագ քօլէքսիօնլարը
պօղմամագ իչին զայպ օլմուշ վէ եա էսկիմիշ
նիւսխէ եէրինէ տիկէր պիր նիւսխէ տահա սա-
թամայաճաղըլ:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (7)

ՌԷՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԹԻՐ-ՄԱՄՈՒԿԸ)



Արդ, Չու իր զրան սիմին վրայ էր բանի մը վայր-
կենէ ի վեր, երբ իր ուշադրութիւնը ամբողջէն դար-
ձաւ վանդակադրան մը աղմուկէն, որ իր ծխնիններուն
վրայ դարձած էր, հանդիպակաց տան առաջին յարկը:

Մասվաճառին խոշոր աչքերը տարապայման բաց-
ուեցան, և իր դէմքը ամենասաստիկ սքանչանք ցոլա-
ցուց իսկոյն:

Արդարեւ իր աչքին երեւցող տեսարանը յիշաւի
աննէն անզգայ սիրտն իսկ դիւթելու, հմայելու բնու-
թիւն ունէր:

Թերեւս համոզուած թէ ծաղիկները որոց մէջտեղ
երեւցած էր, կը ծածկէին զինքը անցորդներէն, առան
և հինգի մօտ գեղեցիկ աղջիկ մը իր գողար գլուխը կը
ծածանէր պատուհանը զարդարող վարդերուն և հոր-
դանսիաներուն մէջէն, և, կարծելով թէ մէկը չէր դի-
տէր զինքը, կը պատրաստուէր իր ամեն առտուան խը-
նամբը տալ իր սիրեցեալ տունկերուն:

Փողոցին մէջ իր առաջին ակնարկը Չուի վրայ չը
կեցաւ, բայց սա իր ակնարկովը կը լրտէր զայն:

Նոյն իսկ ոսկեկոճակ մանտարինի մը յաճախոր-
դուհին համար Չու աչքերն այն կողմ՝ չպիտի դար-
ձունէր:

Բայց իր դրացուհին իրաւ գեղեցիկ էր իր ծաղ-
կեայ ու կանանչադարձ շրջանակին մէջ:

Կարծես գիտուն մը, շինական մեղանի մէջ թաթ-
խուած վրձինի մը հարուածովը զծած էր յօնքերը որք
շնորհալից աղեղ մը կը ձեւացնէին իր վիթի մեծ աչքե-
րուն վերեւը:

Այտերը վարդերանգ ու թաւշակերպ էին գամել-
եաի ծաղկին պէս, և իր կարմրափայլ շուրթերը չէին
կրնար զանազանուիլ կարմիր կոկոններէն որոց վրայ
հակած էր:

Գեղեցիկ սև մազերը բաժնուած էին երկու հաստ
հիւսքերու որք ուսերուն վրայ իյնալով, կըսէին թէ
անիկա մանկամարդ աղջիկ էր, վասն զի քանդոնի նա-
հանգին մէջ կարգուած կիները միայն իրաւունք ունին
մազերնին վեր առնելու և զարդերով պնդելու:

Վերջապէս իր բարակ փոքրիկ ձեռքերն որք դըր-

ուագուած յախճապակիէ թեթեւ ցնցուղ մը կը գոր-
ծածէին, հաւկթաձեւ ու փայլուն եղունգներով կը վեր-
ջանային, որոնք վարդի թերթերու կը նմանէին:

Չու այսչափը կրնար գտնել հրապուրիչ աղջկան
գեղեցկութենէն, բայց այսչափը կը բաւէր ճշմարիտ
սքանչանքի մէջ թաղելու համար զինքը, և դարձեալ
ամենամեծ ուշադրութեամբ կը հետեւէր անոր ամենա-
փոքր շարժումներուն, երբ ջուրի կաթիլ մը, որ այդ
ծաղիկներէն մէկուն յատկացուած էր՝ այլ զոր հովը ա-
ռաւ տարաւ, եկաւ աջ աչքին մէջ մտաւ և ստիպեց
զայն որ գլուխը մէկէնիմէկ խնարհէ:

Վանդակապատ պատուհանը գոցուած էր. դիւ-
թական տեսիլքն անհետացած էր:

Մինակ, հեռ տարած էր դիւրավառ մասվաճա-
ռին սիրտը: Գործը լմնցած էր, Չու սիրահարուած էր:

Քանի մը վայրկեան անօգուտ սպասումէ ետք, իր
խանութը մտաւ, ուր այն օրը թողուց որ իր յաճա-
խորդուհիները ամեն ժամանակէ աւելի ծիծաղին իր
վրայ: Ի շուր կարմիր-Մամուկ անուանեցին զայն, յօն-
քը չպոստեց, բայց երբ կանոնական ժամը հնչեց, ա-
ռանց հոգ ընելու ուշ մնացողները, գոցեց դուռը և
տեսան որ մեծաքայլ հեռացաւ դէպ ի Մարգարիտներու
գետին եզրը:

—

Չուի տարիաւնիք

Յաջորդ առտուն, Պաթէօն-տ'Օն փողոցին մաս-
վաճառը ըստ սովորականին բացաւ իր խանութը, այ-
սիքն արեւածագին, և սկսաւ ծառայել իր բազմաթիւ
յաճախորդներուն իր սովորական փութկոտութեամբը:
Սակայն անոնցմէ շատերը ստիպուեցան նոյն հարցումը
երկու անգամ ուղղել անոր, ինչ որ երբեք չէր պա-
տահան:

Չու մտադիր էր յայտնապէս:

Իր զբաղումներովը պարապելով հանդերձ յաճա-
խակի խուսափուկ ակնարկներ կը նետէր, ոչ միայն պա-
տուհանին վրայ ուր մանկամարդ աղջիկն առջի օրն ե-
րեւցած էր իրեն, այլ և տանը դրան վրայ ալ:

Կարծես մէկուն դուրս ելլելը կը լրտեսէր:

Պատճառն այն էր որ կարմիր-Մամուկը քսանըւորս
ժամէ ի վեր տեղեկութիւններ առած էր և սկսած էր
հիւանդ իր ուսուցիչը:

Սիրահար մասվաճառը իմացած էր որ իր սիրուն
դրացուհին լիու-Սիու կը կոչուէր, ֆրանսերէն Սու-

Պրոտէ, և թէ առանձին կապրէր իր ժօրը հետ, որուն մէկ հատիկ զաւակն էր:

Եթէ մինչեւ այն օրը ոյս ամենը չէր գիտցած ինք, պատճառն այն էր թէ Լիու-Սիուի հայրը քանի տարիներէ ի վեր մեռած էր և թէ Չինաստանի մէջ կիները շատ քիչ գուրս կելլան իրենց տուններէն: Ուստի երբէք առիթ չէր ունեցած ոչ տեսնելու ոչ հանգիպելու անոնց որք այնքան սաստիկ կը շահագրգռէին զինք այժմ:

Ասկից զատ, գիտէր որ մանկամարդ աղջիկ մը, զոր յաճախ տեսած էր իր յաճախորդութիւններուն մէջ, անոնց ծառայութեան տակն էր, և այս սպասուհիին էր որ անհամբերութեամբ կը սպասէր, անպատճառ անոր միջնորդութենէն օգուտ քաղելու մտադիր:

Խեղճ արարածը պարզապէս կերեւակայէր թէ Լիու-Սիու նշմարած էր զինքը. իր կոշտակոպիտ անամբտութեամբ, փոքր արկածն, առջի օրուան ջուրին կաթիլը թելագորութիւն մը նկատած էր, և միտքէն ըսած թէ իր ընկերք ամենէն շնչին բանն էր անյապաղ յայտարարել իր սէրը:

Հասնելու համար այս արդիւնքին, վարդապոյն չըբեղ թուղթի վրայ գրած էր բոցավառ նամակ մը զոր՝ Մարգարտներու գետին երկայնքը ունեցած երազանքները ներշնչած էին իրեն, և կուգէր իր հասցէին ղրկել զայն:

Ինչպէս կերեւայ: մեր գիւցաղնը կարեւոր պատճառներ ունէր մտադրաւ ըլլալու համար:

Նոյն իսկ կը սկսէր յուսահատիլ, երբ յանկարծ թերեւս տասներորդ անգամն ըլլալով իր խանութին սեմին վրայ կեցած պահուն, հանգիպակաց դուռը վերջապէս բացուեցաւ և դուրս ելաւ սպասուած աղախինը:

Տասնեութը քսան տարեկուն կին մըն էր, վառ և ծիծաղկոտ, ինչպէս են Չինաստանի մէջ բոլոր մանկամարդ աղջիկներն ստորին դասակարգի որոց ամենամեծ ազատութիւն կը թողու սովորութիւնը:

Զանիկա տեսնելուն՝ Չու յիշեց որ Մէ-Քուի, այսինքն Վարդ կանաւանէին զայն, և վայրկեան մը իսկ չը տարակուսեցաւ այն դիւրութեան վրայ որով պիտի կրնայ զայն սիրաշահի:

Կանչած էր զայն. աղջիկը փութացեր էր փողոցն անցնիլ, եւ երբ իւր ձեռքէն հկած շնորհալի ձեւովը հրաւիրեց աղախինը որ անմիջապէս գնումները կատարէ, Մէ-Քուի առանց վարանելու անոր հետեւեցաւ խանութին խորը:

—Մտիկ ըրէ, ըսաւ անոր անմիջապէս, վասն զի կուգէր օգուտ քաղել անոր հետ առանձին գտնուելէն, յտիկին Լիու-Սիուի ծառայութեան մէջն ես:

—Այո, պատասխանեց Մէ-Քուի, ոյս հարցումէն բաւական զարմացած, վասն զի ինք աւելի կը սպասէր այն յարգական խօսքերուն որոց սովոր էր մասվաճառը:

—Տիկին Լիու աղջիկ մը ունի, շարայարեց Չու, ըստ երեւոյթին առանց նշմարելու Վարդին զարմանքը:

—Ինչէ՞ն գիտէք, հարցուց աղախինը բոլորովին ապշահար:

—Ծաղիկներն ոտոգած պահուն տեսայ զինքը: Ինքն ալ անշուշտ զիս նշմարեց. եւ ես սիրահարուեցայ:

—Դուք, սիրահար:

—Տարօրինակ բան է:

Այս բաներն ըսելով, զրուշնոց մը դրաւ անոր ձեռքին մէջ:

—Օ՛հ, ամենեւին, պատասխանեց Մէ-Քուի շուշելով դրամը որ իրեն համար ամսէք մըն էր:

—Կուգե՞ս ինձի ծառայել, Օ՛հ, բանէ մը մի՛ վախնար, բարի գիտումներ միայն ունիմ. մինակ փափաքս է ամուսնանալ պաշտելի տիրուհիիդ հետ: Լիու-Սիու է անունը:

—Այո՛:

(Շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՈՒՒՏՈՒ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԲ

Պատկերազարդ

ՅՐԱՆՍԱՀԱՅ

ՓԱՐԻՉ

1900

Սոյն ընդարձակ բառգիրքը, որուն առաջին հատորը, 1061 մեծագիր երեսներէ բաղկացած և բազմաթիւ պատկերներով զարդարուած, հրապարակ ելած է, կը պարունակէ Ա—Ի գիրքը:

Պուլկարիոյ և Ռուսմանիոյ մէջ գնել փափաքողները պէտք է դիմեն Վառնա «Հայերի» խմբագրութեան:

Նոյնպէս կարելի է ուղղակի գիմել հեղինակին, հետեւեալ հասցեով

108 Ալբանիա քո Նեոյի

Նեոյի սիւռ Սեմ

(Ֆրանս)

Ամէն մէկ հատորի գինն է 25 Ֆրանք:

Печатница „Взаимность“ — Варна